ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 8-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 11-Ի ԹԻՎ 21-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ 2020թ. հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետության ոստիկանության արտաբյուջետային միջոցների հաշիվներով շրջանառությունը դադարեցնելու հանգամանքը և համաձայն <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի 2019 թվականի սեպտեմբերի 11-ի <<Հայաստանի Հանրապետության ոստիկանության ծառայողներին (աշխատողներին) պարգևատրում տալու կարգը և չափերը (ցուցիչները) հաստատելու և Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի 2019 թվականի մարտի 21-ի թիվ 3-Լ հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին>> թիվ 21-Լ հրամանի (այսուհետ՝ հրաման) 4-րդ կետում <<քրեական հետախուզության գլխավոր>> բառերը փոխարինել <<քրեական ոստիկանության գլխավոր>> բառերով և հանել <<ներքին աուդիտի>> բառերը:
2. Հրամանի 1-ին կետով հաստատված հավելվածի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<< 4. Պարգևատրման տվյալ ֆոնդից ճանապարհային ոստիկանության, ոստիկանության Երևան քաղաքի վարչության պարեկապահակետային ծառայության գնդի 4-րդ (հատուկ)

գումարտակի ծառայողներին (աշխատողներին) ամսական պարգևատրումներ հատկացվում են պահպանելով մինչև սույն հրամանի տրման տարին բյուջետային և արտաբյուջետային միջոցների հաշվին յուրաքանչյուր ամիս հատկացվող հավելումների և լրավճարների արդյունքում ամսական աշխատանքի վարձատրության չափերը>>:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման հաջորդ օրվանից:

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

«05» 02 2020թ.

ք. Երևան